


ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՎ  
ՄԱՅԱԿՈՎՈՒՄ  
ԳՅՈՒՂԵՐԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ  
ՀՈՒԾՈՒԹՅԱՆՆԵՐԸ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE



Հեղինակ՝  
Գիտական խմբագիր  
Խմբագիր-սուբագրիչ  
Համակարգչային ձևավորող  
Չափագրությունների հեղինակ  
**Սամվել Կարապետյան**  
**Էմնա Աբրահամյան**  
**Դասմիկ Շովիաննիսյան**  
**Արմեն Գևորգյան**  
**Աշոտ Չակորյան**

Կ 294 **Սամվել Կարապետյան**  
**Նորգույն և Սայակովսկի գյուղերի պատմական հուշարձանները.** / Ս. Կարապետյան.- Եր.: ՀճՈՒ հիմնադրամ, 2014 - 16 էջ:

## Մեր երախտագիտությունն ենք հայտնում սույն գրքույկի հովանավոր հարգարժան Վարդան Հարությունյանին

Հայրենիքն անհուն նվիրումի և ոգեղենության միակ աղքուրն է, ազգերի գոյությունն իմաստավորած գերակա արժեքը:

Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաշությունն է:

Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ:

Ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բազում մահաբեր խութերով դարերը պատվով են հաղթահարել այն ազգերը, որոնց հայրենաճանաշությունը բյուրեղացել և վերածվել է Հայրենիքի պաշտամունքի, որի պայմաններում

հաղթանակն ապահովված է եղել նույնիսկ անկախ ուժերի քանակական անհամաշափությունից:

Ոգեղեն արժեքներով առաջնորդվող և ըստ այդմ ուժեղ, իսկ սրանով էլ պայմանավորված՝ երջանիկ հասարակություն ունենալու համար անքննելի անհրաժեշտություն է, որ նոյն հասարակության յուրաքանչյուր մասնիկը լինի հայրենաճանաչ, որն էլ բնականորեն սկիզբ է առնում հարազատ ծննդավայրի ճանաչողությունից:

Հուսով ենք, որ սույն գրքույկն իր համեստ ներդրումը կունենա մեզանում այնքան անհրաժեշտ հայրենաճանաշության խորացման գործի մեջ:

Կեցցե՞ն մեր հայրենաճանաչ հայրենակիցները, փառք սրբազն Հայրենիքին:

## ՆՈՐԳՅՈՒՂԻ ՊԱՏՍԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

**Տեղադրություն.** գտնվում է Արովյան քաղաքից 2,3 կմ արևելք՝ Կոտայք (Եղովան) և Մայակովսկի (Չահապ) գյուղերի միջակայքում՝ ծովի մակերևոյթից 1431-1455 մ բարձրությամբ լայնազող հարթության վրա:

**Անվանում.** մինչ 1946 թ. պաշտոնական անվանափոխությունը հայտնի էր Թազագյուղ կամ Թազաքյանդ անվամբ:

**Պատմություն.** թերևս իր անվանը համապատասխան՝ համեմատաբար նոր գյուղ է: Համեմայն դեպս, գյուղի հին գերեզմանոցն իսկ չի պարունակում ոչ միայն միջնադարյան, այլև ուշ-միջնադարյան թաղումներ:

**ԺԹ** դարից ավելի վաղ թվագրում չունեն նաև գյուղին վերաբերող դիվանական վավերագրերը:

**Բնակչություն.** ըստ տեղացիների վկայության՝ ներկայիս գյուղաբնակությունը ստեղծվել է 1830-ական թթ. սկզբներին տեղում հաստատված խոյեցի 7 ընտանիքներից:

Վերջին շուրջ 170 տարիներին ընդհանուր առմամբ անընդմեջ աճ արձանագրած զուտ հայաբնակ գյուղին վերաբերող վիճակագրական տվյալների

համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1839 <sup>1</sup>	16	48	43	91
1842 <sup>2</sup>	16	60		
1859 <sup>3</sup>	24	109	89	198
1869 <sup>4</sup>	33			
1873 <sup>5</sup>	37			
1886 <sup>6</sup>	63			
1893 <sup>7</sup>	64			518
1908 <sup>8</sup>				576
1909 <sup>9</sup>		276	318	594
1914 <sup>10</sup>				800
1926 <sup>11</sup>				768
1931 <sup>12</sup>	156	356	375	731
1937 <sup>13</sup>		327	317	644
1939 <sup>14</sup>				686
1959 <sup>15</sup>				610
1970 <sup>16</sup>				727
1979 <sup>17</sup>				948
1989 <sup>18</sup>				1279
2001 <sup>19</sup>		761	799	1560
2004 <sup>20</sup>				1853
2011 <sup>21</sup>		720	703	1423



<sup>8</sup> Կավկազի կալենդար նա 1910 թ., Տիֆլիս, 1909, ուժ. IV, ս. 372.

<sup>9</sup> ՀԱԴ, ֆ. 56, գ. 18, գ. 764, թ. 283: Տես նաև ֆ. 48, գ. 1, գ. 299, թ. 3 219:

<sup>10</sup> Կավկազի կալենդար նա 1915 թ., Տիֆլիս, 1914, ուժ. ստատիստիկական, ս. 185.

<sup>11</sup> Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 148:

<sup>12</sup> ՀԱԽՆ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգագրանական բնակչություններ, Երևան, 1936, էջ 39:

<sup>13</sup> ՀԱԴ, ֆ. 163, գ. 23, գ. 141, թ. 42:

<sup>14</sup> ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 10:



Սորոյուղ հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Նորգյուղի գլխավոր հաստակագիծն ըստ Google Earth (2013 թ.) արքանյակային լրսանկարի (Խրատարակության պատրաստեց Ա. Հակոբյանը, 2014 թ.)

**Դպրոց.** Իդվանական վավերագրերն այս գյուղում եկեղեցական-ծխական առաջին ուսումնարանի գոյությունն արձանագրում են սկսած 1918 թ.-ից, երբ նորաբաց հաստատությունը գործում էր 1 ուսուցչով և 48 աշակերտով<sup>22</sup>: Գործել է նաև 1919 թ.<sup>23</sup>:

1929 թ. գյուղի դպրոցի ուսուցիչ Մովսես Հարությունյանը հիշվում է ի թիվս Սիրիո աքսորվածների<sup>24</sup>:

<sup>22</sup> Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Երևան, 1999, էջ 77:

<sup>23</sup> Նշվ. աշխ., էջ 110:

<sup>24</sup> «Դրօշակ», 1929, № 8, էջ 154:

Հետագա տասնամյակներում և շարդ գործում է միջնակարգ դպրոցը:


**Եկեղեցի.** Նորգյուղի Ար. Աստվածածին եկեղեցու մասին առաջին վկայությունը վերաբերում է 1839 թ.<sup>25</sup>, ընդ որում, բոլոր հիմքերը կան նշելու, որ այն հենց 1830-ական թթ. էլ կառուցված շենք է եղել, որը, ըստ հարավային մուտքի բարավորին փորագրված տարեթվի, հիմնավերակառուցվել է 1886 թ.:

Արդեն 1913 թ. հոկտեմբերին եկեղեցին հասցրել էր այն աստիճան քայ-

քայվել, որ Երևանի գործակալին հանձնարարվել էր այցելել գյուղ և հոգաբարձուների հետ խորհրդակցել եկեղեցու շինության հարցի շուրջ. «...մասնաւորապէս քարերի գննան գործի մասին տարածայնութիւններ կան»<sup>26</sup>:

Հատկանշական է, որ հակառակ իր գոյության ընթացքում կատարված մի քանի վերակառուցումների՝ նոյնիսկ հիմնավերակառուցումից հետո էլ եկեղեցին պահպանել է նախնական՝ Սր. Աստվածածին անվանումը: Հենց այս անվանը էլ եկեղեցին հիշվում է բազմաթիվ վավերագրերում (օրինակ՝ 1842 թ.<sup>27</sup>, 1909 թ.<sup>28</sup>):

Սր. Աստվածածին եկեղեցին ունի ժԷ դարից ի վեր, բայց առանձնապես



Սր. Աստվածածին եկեղեցու հաստակագիծը (շափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

ԺԹ դարում ամենալայն տարածում գտած եռանակ բազիլիկ հորինվածք (արտաքին չափերն են՝ 20,71 x 13,51 մ): Խորանը կիսաշրջանաձև է, զույգ ավանդատները՝ ուղղանկյունաձև, սլաքաձև բաղածածկը պահող նոյնաձև կամարները կրող երկու զույգ սյուներ խաչաձև կտրվածքով, մկրտարանի ավագանը՝ իր ավանդական տեղում՝ հյուսիսային որմի մեջ: Մուտքերը բացված են արևմտյան և հար-

<sup>26</sup> ՀԱԴ, ֆ. 48, գ. 1, գ. 641, թ. 42:

<sup>27</sup> ՀԱԴ, ֆ. 56, գ. 4, գ. 617, թ. 32:

<sup>28</sup> ՀԱԴ, ֆ. 48, գ. 1, գ. 299, թ. 3 շրջ.:



Ար. Աստվածածին Եկեղեցին 1977 թ. (լուս.՝ Ս. Կարապետյանի)



Ար. Աստվածածին Եկեղեցին հյուսիս-արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)


վային ճակատներից, վերջինս՝ նույն կողմից եկեղեցուն կցված քառասյուն զանգակատան մեջ (Երկրորդ հարկում ունի սյունազարդ ռոտոնդա, որը վերականգնվել է վերջին տարիներին):

Հարդարանքի գլխավոր տարրերն են հարավային մուտքի բարավորի վերնամասում ազուցված գեղաքանդակ խաչքարը (կերտված թերևս հենց 1886 թ. իրականացված վերաշինության ժամանակ), զույգ մուտքերի արտաքին քանդակազարդ եզրագոտիները:

Խաչքարին փորագրված է ՅՆԹՀ հապավումը, որը բացվում է այսպես.

*Յիսոս Նազովուցի՝ բազավոր հրեից:*

Եկեղեցու հարավային որմի նոտ ամփոփված է գյուղի ծխատեր քահանաներից մեկը, որի կիսաեղծ տապանագրից ընթերցվում է.



Ար. Աստվածածին Եկեղեցու զանգակատան առաջին հարկը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



**Մատուռ «Թնթոցներ» կամ Սք. Ամենափրկիչ.** ուխտատեղի է գյուղի հարավարևմտյան եզրին՝ Գետառի աջ ափով ձգվող ժայռապարի մի հատվածում: Նվիրատվական բնույթի պարզ ժայռախաչեր են, որոնց վրա կառուցվել է անկանոն հատակագծով փոքրածավալ մի շինություն: Ըստ հարավահայաց որմի մեջ ազուցված քարի բովանդակության՝ վերջին անգամ նորոգվել է 2012 թ.

*Ի հայրապետութեան / Ա. ս. օ. տ. տ.  
Գարեգին Բ / Ամենայն հայոց կարողի-  
կուսի / Եւ յառաջնորդութեան / տ. Առա-  
քել եսու. Քարամեանի / վերանորոգե-  
ցաւ Սուրբ / Ամենափրկիչ մատուռ /  
բարեգործութեամբ / Բալարեկ Քոչա-  
րեանի, / յամի տեառն 2012 թ.:*

**Գերեզմանոց.** գյուղն ունի երկու գերեզմանոց: Դրանցից հինը գտնվում է



Տեսարաններ Նորգույի հին գերեզմանոցից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

գյուղի հարավարևմտյան եզրին՝ Գետառի աջափնյա ձորաեզրի հարթակին: Այստեղ առավել հին քաղումները վերաբերում են 1830-ական թթ.: Դրանք մեծագույն մասով անմշակ սալատա-

պաններ են, որոնցից մի մասն ունի նաև պարզագույն լուծումներով հարդարված զիսակալ խաչքարեր (քերևս այնպիսիք, ինչպիսիք առկա են իրենց նախնյաց օրդանի՝ Խոյ գավառի երեմնի հայ-

քնակ գյուղերի՝ ցարդ պահպանված գերեզմանոցներում): Արձանագիր են միայն ուղղանկյունաձև մշակված մի քանի տապանաքարեր, որոնցից հները վերաբերում են ԺԹ դարի վերջերին:



1830-1840-ական թթ. խաչքարեր և ԺԹ-Ի դարերի արձանագիր տապանաքարեր Նորօյուղի հին գերեզմանոցում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը.

ա Այս է տապան հանգուցեալ Բաղդասարին, որ է որդի Սանուկին, որ վոլիսեցաւ յերկինս վերին, որ հանդիպի, ա(սոտա)ծ ողորմի, 1888:

բ ... հա(նգիստ) ... (Ն)ահապետ Ղազարեանց, ի 28 ամաց / հասակի, քաջ պատանի, հանգիստ ուկերացդ, ազնի նա/հապետ, որ չհասար ցանկալի նպատակիդ, վաղճանեց 1891 ամի, / յիշեցէր ի տէր:

զ Կարապետի ծմնղիան թիւ՝ 1882 ամի, / ի 1911 թ. մեռավ:

**Սանուկ ավետրան կամ Թուխ մանուկ մատուռ.** մերօրյա պարզ շինություն է, որն ուշագրավ է ներսում գտնվող Ժ-ԺՄ դարերին բնորոշ վերնամասից կրորված մի խաչքարով:

**Մք. Աստվածածին մատուռ.** հիմնավեր սրբատեղի է, որը գտնվում է գյուղի հյուսիսարևելյան քաղամասում: Տեղում պահպանվել են ԺԵ-ԺԶ դարերին բնորոշ ոճական և գեղարվեստական առանձնահատկություններով տարբեր խաչքարի մաս կազմող անարձանագիր բեկորներ:

**Նոր գերեզմանոց.** գտնվում է գյուղի հյուսիսային եզրին և զբաղեցնում է մի





Ար. Աստվածածին մատուռի տարածքում պահպանված խաչքարերի բեկորներ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

քանի անգամ ավելի ընդարձակ մակերես, քան մինչև Ի դարի սկզբները գյուղին ծառայած հին գերեզմանոցը: Գործող գերեզմանոց է, որի համեմատաբար հին հատվածում առկա առավել քաղ տապանաքարերը վերաբերում են խորհրդային առաջին տասնամյակներին:

Ուղղանկյունաձև տապանաքարերից զատ՝ այստեղ ևս կան փոքրարիվ անշակ սալատապաններ:



Նորօյուղի նոր գերեզմանոցի համեմատաբար հին հատվածը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

## ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՍՍԿԱՆ ՀՈՒԾԱՐՁԱՆԵՐԸ

**Տեղադրություն.** գտնվում է Արովյան քաղաքից 2,5 կմ հարավ-արևելք՝ Նորօյուղ, Արամուս և Բալահովիտ գյուղերի միջակայքում՝ լայնազոգ հարթության վրա: Ծովի մակերևույթից բարձր է 1410-1437 մ:

**Աճվանում.** մինչև 1940 թ. հայտնի էր Չահապ անվամբ:

**Պատմություն.** առնվազն միջնադարից եղել է Կոտեից գավառի զուտ հայրնակ գյուղերից մեկը, սակայն Այրարատի շատ գյուղերի նման ամայացել է 1604 թ. իրականացված շահարասյան բռնագաղթի հետևանքով:

Չահապ անվամբ գյուղը հիշվում է 1760-ական թվականներին այդտեղ գտնվող Գեղարդավանքին պատկանող մի ձիթհանի առնչությամբ<sup>32</sup>: Սակայն, ինչպես կարելի է եզրակացնել գյուղի պատմական հուշարձանների և մասնավորապես հին գերեզմանոցի ուսումնասիրությունից, ի տարբերու-

թյուն մերձակա Բարձարի, Կապուտան, Ակունք, Արամուս, Կամարիս, Էլատ և այլ գյուղերի, որոնք բռնագաղթից շատ չանցած վերակենդանացել են որպես հայաբնակ գյուղեր, Չահապը կանոնացել է անքնակ, կամ եղել է խիստ սակավամարդ:

Շենացել է միայն 1820-ական թթ. վերջերին՝ ոռու-պարսկական պատերազմից հետո Խոյ և Սալմաս գավառներից հեռացած և այստեղ բնակություն հաստատած հայերի շնորհիվ:

Մեծ եղենից հետո Չահապը համալրվում է նաև Վանի և Տարոնի շրջաններից փրկված, իսկ ավելի ուշ՝ նաև Հյուսիսային Արցախից, մասնավորապես Գանձակից բռնագաղթված հայերի հաշվին:

**Բնակչություն.** սկսած 1831 թ.-ից մինչև գրեթե մեր օրերը հասնող վիճակագրական տվյալների համադրումից երևում է, որ ընդհանուր առմամբ Չահապ-Մայակովսկին արձանագրել է բնակչության հարատև աճ (բացասական միտումներ նկատվել են 1838-1842

<sup>32</sup> Սիմեոն Կարողիկոս Երևանցի, Զամրո, Երևան, 2003, էջ 385:

թթ. բնակիչների մի մասի՝ այլ բնակավայրեր, մասնավորապես Փարափ<sup>33</sup>, Խարբունարիս, Երևան և Թիֆլիս փոխադրվելու, 1914-1931 թթ. Առաջին աշխարհամարտի, նրան հաջորդած խառնակ տարիների, նաև բոլշևիկյան հալածանքների հետևանքով և ի վերջո՝ Երկրորդ աշխարհամարտի և նրան հաջորդած տարիներին).

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1831 <sup>34</sup>	28	73	61	134
1837 <sup>35</sup>		443	410	853
1839 <sup>36</sup>	28	89	81	170
1842 <sup>37</sup>	16	50		
1859 <sup>38</sup>	26	93	94	187
1869 <sup>39</sup>	30			
1873 <sup>40</sup>	39			
1886 <sup>41</sup>	56	239	201	440
1893 <sup>42</sup>	57			456
1897 <sup>43</sup>				532
1908 <sup>44</sup>				551
1909 <sup>45</sup>	506	419		925
1914 <sup>46</sup>				907
1926 <sup>47</sup>				767
1931 <sup>48</sup>	148	347	389	736
1939 <sup>49</sup>				938
1959 <sup>50</sup>				904
1970 <sup>51</sup>				1143
1979 <sup>52</sup>				1609
2001 <sup>53</sup>	896	934		1830
2004 <sup>54</sup>				2143
2011 <sup>55</sup>	1080	1081		2161

<sup>33</sup>Ի դեպ, Փարսի էր փոխադրվել նաև 1831 թ. Շահապում գյուղավեն վկայված Ղազար Խուդայանը (ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 28; ց. 319, թ. 21):

<sup>34</sup>ՀԱԴ, ֆ. 90, ց. 1, գ. 93, թ. 28-31; ց. 319, թ. 21-24:

<sup>35</sup>ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, թ. 46:

<sup>36</sup>ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 10, թ. 5: Տես նաև Շահապումնեանց Յ., Սոսորագործին Կարուղիկ Էջմիածնի և հիմն գաւառացն Արարատայ, Էջմիածնի, 1842, էջ 162:

<sup>37</sup>ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, թ. 1ա:

<sup>38</sup>ՀԱԴ, ֆ. 267, ց. 1, գ. 13, թ. 320-327:

<sup>39</sup>ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 42, թ. 3:

<sup>40</sup>ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3:

<sup>41</sup>Նոյն տեղում: Նաև՝ ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 234, թ. 781:

<sup>42</sup>Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնակչարիկ բառարան, հ. Ա, Վեմետիկ, 1903-1905, էջ 707:

<sup>43</sup>Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 132:


<sup>44</sup>Կավազսկի կալենդար հա 1910 թ., Տիֆլիս, 1909, օդ. IV, ց. 419.

<sup>45</sup>ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 283: Նաև՝ ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 3 լրշ.:

<sup>46</sup>Կավազսկի կալենդար հա 1915 թ., Տիֆլիս, 1914, օդ. ստատիստիկ, ց. 208.

<sup>47</sup>ՀՀ բնակավայրերի բառարան, նոյն տեղում:

<sup>48</sup>ՀՄԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգաբնակությունը, Երևան, 1936, էջ 39:



Մայակովսկի (Շահապ) գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth (2013 թ.) արքանյակային լուսանկարի (իրատարակության պատրաստեց Ս. Հակոբյանը, 2014 թ.)

<sup>49</sup>ՀՀ բնակավայրերի բառարան, նոյն տեղում:

<sup>50</sup>Նոյն տեղում:

<sup>51</sup>Նոյն տեղում:

<sup>52</sup>Նոյն տեղում:

<sup>53</sup>Նոյն տեղում:

<sup>54</sup>Նոյն տեղում:

<sup>55</sup>ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 10:

**Եկեղեցի.** թեև վաղագույն հիշատակության մեջ (1839 թ.) եկեղեցին վկայված է Սր. Աստվածածին անվամբ<sup>56</sup>, այնուամենայնիվ, արդեն հետագա

<sup>56</sup>Շահապումնեանց Յ., նոյն տեղում:



Սր. Գևորգ Եկեղեցին հարավ-արևելքից, հարավ-արևմտքից, արևմտքից, հարավից, արևելքից և տեր Դազարի պատմական հիշատակագրությունն արևմտյան ճակատին (լուս.:՝ Ս. Կարապետյան, 2014 թ.)

Վավերագրերում և մասնավորապես 1842<sup>57</sup> և 1909 թթ.<sup>58</sup> նույն Եկեղեցին հիշվում է Սր. Գևորգ անվամբ:

Հետաքրքրական է, որ 1947 թ. իրականացված ուսումնասիրական աշխատանքների ժամանակ Եկեղեցին դարձյալ վկայվել է Սր. Աստվածածին անվամբ<sup>59</sup>:

<sup>57</sup> ՀԱԴ, ֆ. 56, գ. 4, գ. 617, թ. 32:

<sup>58</sup> ՀԱԴ, ֆ. 48, գ. 1, գ. 299, թ. 3 շրջ.:

Արևմտյան ճակատին ունի թերևս ԺԹ դարի 40-ական թթ. փորագրված նվիրատվական մի արձանագրություն, որը, թեև Եկեղեցու կառուցման ժամա-

<sup>59</sup> ՀԱԴ, ֆ. 1063, գ. 1, գ. 1403, թ. 2:


նակի մասին որևէ տեղեկություն չի հաղորդում, այնուամենայնիվ, ուշագրավ է Շահապում Պարսկահայրից փոխադրվածների և Ակոռի հայտնի երկրաշարժի մասին հիշատակություններով.

*Ս(ուր)ք Խաչս յիշատակ է տ(է)ք Ղազարին, ձեռամքն իր կազմեաց, / թվին 1829: 1840-ին, յունիսի 2-ին / յԱկուռու շարժն:*

Հարկ է նշել, որ վիմագրում հիշատակված Ղազարը քահանա Պողոսյանը, ըստ ամենայնի, Պարսկահայրից իր խսկ հոտի հետ փոխադրված և արդեն Շահապում հովվությունը շարունակած հոգևորականն էր, քանի որ նա ծնվել է 1776 թ., խսկ քահանա ձեռնադրվել՝ 1810 թ. մարտի 9-ին (Շահապում ծխատեր է հիշվում 1831<sup>60</sup> և 1841 թթ.<sup>61</sup>):

Ի դեպ, գյուղի հին գերեզմանոցում պահպանվել է մի տապանաքար, որի կիսաեղծ արձանագրությունից պարզվում է, որ տեր Ղազարն այն կերտել է տվել դեռևս կենդանության ժամանակ՝ 1836 թ., և միայն մահվան տարեթիվը (1853 թ.) հավելելով՝ գետեղվել է հանգուցյալի գերեզմանին:

Ամենայն հավանականությամբ եկեղեցին հիմնավերակառուցվել է 1910-ական թթ. սկզբներին: Հայտնի է, որ 1911 թ. մայիսի 7-ին Էջմիածնի սինոդին էին դիմել ընթացիկ աշխատանքների համար ծախսել նաև եկե-



Սր. Գևորգ Եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյան, 2014 թ.)

60 ՀԱԴ. ֆ. 90, գ. 1, զ. 93, թ. 31; զ. 319, թ. 24:

61 ՀԱԴ. ֆ. 56Թ, գ. 12, զ. 25:



Սր. Գևորգ Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելյան և քաղաքապ առաստաղը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

դեցապատկան 270 ոուրին<sup>62</sup>: Ինչպես երևում է շահապցիները հիմնավերակառուցմանը ձեռնամուխ էին եղել ա-

ռանց սպասված բույլտվությունը ստանալու, որի պատճառով էլ նույն թվականի հունիսի 1-ին ծխական հոգաբարձությունը նկատողություն էր ստացել, քանի որ «...առանց կանխա-

գոյն բոյլսուութեան յիշեալ նորոգութեան մեծ մասն արդէն արել է»<sup>63</sup>:

Եկեղեցին ունի իր ժամանակաշրջանին հատուկ և լայն տարածում գտած եռանավ քազիլիկ հորինվածք (արտաքին չափերն են՝ 18,58 x 11,74



Հատված Սր. Գևորգ Եկեղեցու որմնանկարազարդերից  
(լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

մ), կիսաշրջանաձև խորան, ուղղանկյուն հատակագծով զույգ ավանդատներ, արևմտյան և հարավային ճակատներից քացված զույգ մուտքեր:

Երկենտրոն՝ սլաքաձև քաղը պահում են խաչաձև կտրվածքով երկու զույգ սյուները: Արտաքուստ երեսապատված է սրբատաշ տուֆով, իսկ



Սր. Գևորգ Եկեղեցու հարավային ճակատին ագուցված խաչքարեր, ԺԵ դար (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

<sup>63</sup> Նշվ. գործը, թ. 3:

Աերքուստ՝ սվաղված, որն էլ մասամբ  
որմնանկարագրված է:

Հիմնավերակառուցման ժամանակ  
Եկեղեցու հարավային և արևմտյան  
ճակատներին սոսկ որպես շինանյոթ  
և, ըստ այդմ, բավականաչափ ան-  
խնամ, մինչև իսկ վանդալական վերա-  
բերմունքով ազուցվել են ԺԵ-ԺԶ դա-  
րերին բնորոշ գեղաքանդակ մի քանի  
խաչքարեր: Նկատելի է, որ իրքն երե-  
սապատ հարմարեցնելիս ողորկ և  
հարք մակերես ստանալու ճանապար-  
հին Եկեղեցաշինարարները հատկա-  
պես աշխատել են ձերքազատվել խաչ-  
քարերի քիվամատերից, որոնք և ան-  
խնա կերպով ոչնչացրել են (մինչեւ  
ակնհայտ է, որ առանձնապես հենց



Խաչքարերի բնկորմեր Եկեղեցու ներսում և բակում (լուս.)  
Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Խաչքար (1483 թ.) Սր. Գևորգ Եկեղեցու հարավային ճակատին (լուս.) Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Խաչքարեր (ԺԵ դար) Սր. Գևորգ եկեղեցու հարավային և արևմտյան ճակատներին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

այս ժամանակաշրջանի խաչքարերի արձանագրությունները փորագրված էին լինում քիվին):

Այնուամենայնիվ, մասնատված խաչքարերից երեքի վրա դեռևս ընթերցվում է հետևյալը.

ա) *Սելքիսէր..., / բվի(հ) / ՁԼ/Բ (1483):*

Ծանոթ ազուցված է Եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից արևմտյան: Վերնամասից և աջ եզրից կիսված է:


բ) ...*բարեխաւս է Նիկողա... Սալպարիմ: / Յօվանէս կազմող:*

Ծանոթ ազուցված է Եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից արևմտյան: Քիվը ջարդել են սկզբնանասում և միջնամասում:

գ) ...*Ղոյիճան...:*

Ծանոթ ազուցված է Եկեղեցու ներսում:

Ի դեպ, 1947 թ. տեղում եղել են նաև 1407 թ. արձանագիր մի խաչքար և Եկեղեցու շինարարական արձանագրությունը՝ փորագրված մարմարե



Սր. Հովհաննես Եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

սալիկի վրա՝<sup>64</sup>: Դրանք, ցավոք, ներկայում գոյություն չունեն:

Գերեզմանատան Սր. Հովհաննես Եկեղեցի. դեռևս 1947 թ. գյուղ այցելած Հ. Եղիազարյանը նշել է, որ «Գյուղի արևելյան եզրին կա մի այլ Եկեղեցու շենք, դա հին գյուղի Եկեղեցին է..., այդ Եկեղեցին նույնպես 19-րդ դարի գործ է, շարված է տուֆի անմշակ փորք կտորներից, ցեխով, տանիքը փայտածածկ է եղել, որն այժմ ամբողջապես քանդված է»<sup>65</sup>:

<sup>64</sup> ՀԱՌ, ֆ. 1063, գ. 1, գ. 1403, թ. 2:

<sup>65</sup> Նույն տեղում:



1839 և 1853 թթ. տապանաքարեր գյուղի հին գերեզմանոցում (լուս.՝ Ա. Կարապետյանի, 2014 թ.)

Չափերով ավելի փոքր ( $13,50 \times 7,82$  մ) այս եկեղեցին ունի միանավ բազիկ հորինվածք՝ արևմտյան ճակատից բացված մեկ մուտքով և արտաքուստ նույն ճակատին ազուցված ԺԵ-ԺԶ դարերին բնորոշ գեղաքանդակ մի քանի խաչքարերի բեկորներով, ներսում՝ հյուսիսային որմում մկրտարանի ավազանով։ Այդօրինակ խաչքարի մի բեկոր էլ ազուցված է եկեղեցու ներսում՝ մկրտարանի խորշի մեջ։

**Գերեզմանոց.** ներկայումս գյուղն ունի երեք գերեզմանոց։ Դրանցից հինը, որը պարունակում է ԺԵ-ԺԶ դարերին վերաբերող մի քանի տասնյակ անմշակ սալատապաններ և մինչև ԺԹ դարի կեսերը հասնող ուղղանկյունաձև մշակված շուրջ 20 տապանաքար (երկուսը՝ նաև արձանագիր), գտնվում է գյուղի կենտրոնական մասում՝ Սր. Գևորգ եկեղեցուց շուրջ 200 մ հարավ-արևելքը։



Սր. Հովհաննես եկեղեցու արևմտյան ճակատին ազուցված խաչքարի բեկորներ, ԺԵ-ԺԶ դր. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Սր. Հովհաննես եկեղեցու մկրտարանի խորշում ազուցված խաչքարի բեկոր, ԺԵ-ԺԶ դր. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ա Այս է տապան Գէվորքին, / երիտա-  
սարք առ ա(աստուած փոխեցաւ /  
թվ(ին) ՌՄՁԸ (1839) ին։

բ ... Ղազա ... / ...կազմեաց կենքանի/  
ժամանակին, աղաշեմ հանդիպողին /  
ողորմի ասի ինձ՝ մեղատորին, / թվ(ին) ՌՄՁԵ (1836)-ին, վախչանեալն,  
թվ(ին) ՌՅԲ (1853)-ին։

Իր հնությամբ երկրորդ գերեզմանոցը գտնվում է գյուղի արևելյան եզրին՝

նախկին ծխական, ներկայիս գերեզմանատան Սր. Հովհաննես եկեղեցու շուրջ։ Այստեղ բաղումներն առավելապես վերաբերում են խորհրդային տասնամյակներին, սակայն առանձին դեպքերում դրանք դեռևս շարունակվում են։ Խորին ակնածանքով ցանկանում ենք ներկայացնել Արցախյան ազատամարտի սկզբնական շրջանում կազմավորված Հայոց ազգային բանակի (ՀԱԲ) զաղափարական մարտիկ Վարդան Վարդանյանի տապանագիրը։

գ Վարդանյան Վարդան Լիպարիտի, 1929-1996։

Ծանոթ հանգույցալի հեղինակել է արվեստաբանական բազմաթիվ աշխատանքներ, ի մասնավորի՝ հայկական գորգերի բնությանը նվիրված գիտական մի ծավալուն աշխատություն (անոիպ է)։ Նրա գրչին է պատկանում նաև «Ծանր վարագույր» գիրքը (Երևան, 1992)։

Գյուղի երրորդ գերեզմանոցը գոյացել է վերջին տասնամյակներին և, ըստ այդմ, դեռևս պատմական արժեք չի ներկայացնում։



Վարդան Վարդանյանի և կողակցի գերեզմանը Սր. Հովհաննես եկեղեցու արևմտյան ճակատի առջև (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Սայակովսկի (Հահապ) գյուղը տիեզերքից (լուս.` Google Earth, 2013 թ.)





Յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտքն է ճամաչել հարազատ օրդանը և ուսումնասիրել Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Հայոց Հայրենիքում պատմական հուշարձանները հազարամյակների ընդգրկում ունեն և անհամրելի քանակով ու մեծ խտությամբ տեղաբաշխված են Հայկական ողջ բարձրավանդակում:

Ի տարբերություն բազում ազգերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հայրենի նյութական մշակույթի հուշարձաններին առնչվող ուսումնասիրական տարաբնույթ աշխատանքներ և լուծում նաև դրանց պահպանության խնդիրները, մեր պարագայում նույն անելու հնարավորությունը հիմնականում սահմանափակված է Հայոց Հայրենիքի՝ սույն հայկական պետականության սահմանների ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև որոշ պատմական գաղթավայրերում: Այսինքն՝ պատմական անցքերի բերումով հայ ազգի ներկա սերնդին է ժառանգվել մի իրականություն, որն էապես տարբերվում է շատ ու շատ ազգերի առջև նույն ոլորտում ծառացած խնդիրներից:

Այո՛, հեշտ չէ նախնյաց հիշատակներին հետամուտ լինել մանավանդ ցեղասպանության ճանապարհով Հայրենիքիդ տիրացած օտար պետության տարածքում:

Հայրենիքը, անկախ նրա բռնազավթված կամ ազատագրված լինելու իրողությունից, սրբազն է, որտեղ պատմական հուշարձաններն ել հավաքական առումով երկիր մոլորակի տվյալ հատվածը հայ ազգին ի բնե վերապահված լինելու մասին ազդարարող «գրանցման վկայականներ» են, որոնք իրենց իսկ գոյությամբ ել մատնում են պատմական իրականությունը և դրանով անհանգստություն պատճառում որոշ զավթիչ հարևանների:

Ահա այս ըմբռնումների և պարտականությունների գիտակցման թելադրանքով էր, որ սկսած 1969 թվականից՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը լծվում է Արևմտյան

Հայաստանի և Կիլիկիայի պատմական հուշարձանների փաստագրման գործին և ժամանակի ընթացքում առաջ մղելով աշխատանքները՝ 1982 թ. Գերմանիայի Աախեն քաղաքում հիմնում «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Տարեցտարի լայնացնելով իրականացվող աշխատանքների ծավալները՝ արդեն 1996 թ. կազմակերպությունը պաշտոնական գրանցում է ստանում ԱՄՆ-ում (Լոս Անջելես), իսկ 1998 թ.՝ նաև Հայաստանի Հանրապետությունում (Երևան): Վերջինս նախ 2000 թ. վերագրանցվում է, իսկ 2010 թ., անփոփոխ պահելով անվանումը, վերակազմավորվում որպես հիմնադրամ:

45-ամյա գործունեության ընթացքում (1969-2014) հիմնադրամն իրականացրել է շուրջ 240 գիտարշավներ դեպի Պատմական Հայաստանի տարբեր շղաններ, գավառներ և պատմական գաղթավայրեր:

Ստեղծվել է արդեն 400.000 միավորի սահմանագծին մոտեցող թվայնացված պատկերների շտեմարան, որն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում հյուսելու Մեծ և Փոքր Հայքերի տարածքում գտնվող ցանկացած բնակավայրի պատմությունը:

Հճու հիմնադրամը, սկսած 1997 թ.-ից, ձեռնամուխ է եղել ավարտված ուսումնասիրությունների իրապարակման գործին, որով և անցած տարիներին լույս են ընծայվել ավելի քան 60 միավոր գրքեր, գրքույկներ, քարտեզներ և տպագիր այլ նյութեր:

2006 թ.-ից ի վեր հիմնադրամը ստեղծում է նաև վավերագրական ֆիլմեր:

Ինչպես իրատարակությունները, այնպես էլ վավերագրական ֆիլմերը գետեղված են համացանցում:

## Գրքի ստեղծման և տպագրության հովանավոր ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ